ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Ա. Կ. ՌՈԿԵՐՉՅԱՆ

I

Սուրեն Սպանդարյանը շատ է զբաղվել դպրոցի, կրթության ու դաստիարակության հարցերով։ Հետաքրքիր է նկատել, որ Ս. Սպանդարյանի ամենածավալուն աշխատությունը՝ «Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան», նվիրված է կրթության ու դաստիարակության հարցերին։ Այստեղ նա հանգամանորեն քննության է առնում լուսավորության և ընդհանրապես կուլտուրայի բնագավառում պարտիայի վարելիք քաղաքականության սկզբունքները։

Դպրոցի և ընդհանրապես մատաղ սերնդի դաստիարակության հարցերը շատ են գրավել կռվող, պայքարող կողմերին։ Յուրաքանչյուր դասակարգ առաջադրել է իր պահանջներն ու սկզբունքները և այդ դասակարգերից իշխողը դպրոցին ու դաստիարակության սիստեմին իր շահերին համապատասխան բովանդակություն է տվել։

Բնութագրելով դպրոցի ու դաստիարակության դերն ու նշանակությունը, Ս. Սպանդարյանը, որպես մարքսիստ, ցույց է տալիս կուլտուրայի և նրա մի ճյուղը հանդիսացող կրթության դասակարգային բնույթը բուրժուական հասարակության պայմաններում։

«Ամեն տեղ, մինչև իսկ ամենաքաղաքակիրթ երկրներում, ժողովրդական ստորին ուսումնարաններում, որտեղ գլխավորապես սովորում են խեղճ, աշխատավոր դասակարգի զավակները, ապագա պրոլետարները, այդ դպրոցները ավելի վատ են կազմակերպվում, նրանց վրա համեմատաբար ավելի քիչ է ծախսվում, քան միջնակարգ և բարձր դպրոցների վրա, ուր դաստիարակվում են միջին և հարուստ դասակարգերի զավակները։ Մատաղ սերնդի դաստիարակության սիստեմումն էլ մենք տեսնում ենք մեր հասարակական կազմի բնորոշ երևույթը դասակարգային բաժանումը. բարձր կրթությունն ստանում է ոչ թե նա, ով ձգտում, շնորհք ունի դեպի գիտությունը, այլ նա, որ փող, միջոց ունի սովորելու»[1]։

Սպանդարյանը իրավացիորեն նկատում է, որ տարբեր կապիտալիստական երկրներում ռազմական մինիստրությունների բյուջեն անհամեմատ ավելի է, քան լուսավորության մինիստրության։

Նույն երևույթը նա տեսնում է և Ռուսաստանում։ Նման դեպքում, երբ ժողովրդի կրթության գործը ոտնահարվում է և զարկ է տրվում միլիտարիզմին, մարքսիստական պարտիան պահանջում է իրականացնել հակառակ սկզբունքը՝ պետական բյուջեի խոշոր մասը ծախսել ժողովրդի կրթության վրա, դրանով նպաստել լայն մասսաների կուլտուրականության բարձրացմանը և առաջ տանել «երկրի թե տնտեսական և թե սոցիալական պրոգրեսը»[2]։

Մյուս կարևոր պահանջը այն է, որ «կրթության գործը դառնա իսկական ազգային, հասկանալով այդ՝ ոչ ազգայնական, այլ ընդհանուր ժողովրդական, առանց դասակարգային բաժանման, առանց փողից կախումի, այլ պարտադիր ու անվճար»[3]։

Այս տեսակետից նա կարևոր է համարում, որ չքավոր ընտանիքի երեխաները ստանան անվճար գրենական պիտույքներ, հագուստ և կոշիկ, տաք կերակուր։ Այլապես նրանք հնարավորություն չեն ունենա սովորել կամ ուսումը շարունակել։

Կրթության հարցը Սպանդարյանը վերցնում է լայն կերպով, այն շաղկապում է ուրիշ հասարակական-քաղաքական հարցերի հետ և հանգում շատ կարևոր եզրակացությունների, որոնք

---

[1] *Ս. Սպանդարյան, Երկեր, հատ. I, Երևան, 1959, էջ 118։*
[2] *Նույն տեղում, էջ 119։*
[3] *Նույն տեղում։*

այսօր էլ պահպանել են իրենց նշանակությունը։ Այսպես, օրինակ, նշելով այն փաստը, որ բուրժուական հասարակության բնորոշ երևույթներից է կանանց և երեխաների հարստահարությունը, Սպանդարյանը պահանջում է, որ անպայման արգելվի մինչև 16 տարեկան հասակի երեխաների աշխատանքը գործարաններում, որպեսզի նրանք կարողանան հաճախել դպրոց, և ապահովվի երկու՝ իգական ու արական սեռերի միատեղ ուսուցումը։ Այս կունենա այն կարևոր առավելությունը, որ նրանք՝ երկու սեռերը, հենց փոքրուց, ուսումնական հարկի տակ կսովորեն միմյանց վրա նայել հավասար, ընկերական աչքով։ Իսկ այդպիսի դաստիարակությունը ուղղակի հարված կլինի՝ կնոջը որպես տղամարդուն անհավասար արարած համարելու տարածված բուրժուական հայացքին։

Մյուս պահանջն է ուսման աշխարհականացումը։ «Կրոնի ուսուցումը բոլորովին պետք է հեռացվի կրթության ծրագրից»[1], որովհետև կրոնը դարձել է դասակարգային հարստահարության, ճնշման մի միջոց, և երկրորդ՝ մանուկների ուղեղը չպետք է ծանրաբեռնել ավելորդ բալաստով։ Հենց մանկավարժական տեսակետից վնասակար պետք է համարել երեխայի հիշողությունը աղոթքներով ու առողջ դատողությանը հակասող ուրիշ առասպելներով ծանրաբեռնելը։ Եվ, վերջապես, պետք է բարելավել ժողովրդական ուսուցչի վիճակը, ապահովել նրան նյութապես ու օգնել բարոյապես. նրա վիճակը բուրժուական հասարակության մեջ շատ ծանր է, և դա բացասաբար է անդրադառնում ուսման գործի վրա։

Առաջադրելով այս պահանջները, Սպանդարյանը ելնում էր այն հիմնական սկզբունքից, որ անհրաժեշտ է մի կողմից՝ ապահովել «երեխաների բազմակողմանի, ներդաշնակ զարգացումը» և մյուս կողմից դպրոցը կապել կյանքի հետ։ Դպրոցի հիմնական նպատակն է, գրում է Սպանդարյանը, երեխաներին «տալ գրական, գիտական պաշար» և պատասխանել «կյանքի իսկական պահանջներին ու կարիքներին»[2]։

Որպեսզի դպրոցը կարողանա բավարարել այդ պահանջներին, նա պետք է ապահովի իր սաների աշխատանքային դաստիարակությունը։ «Դպրոցներում պետք է մտցնել ֆիզիկական աշխատանք, բոլոր երեխաները, առանց դասակարգային խտրության, իրենց ընդունակություններին համապատասխան արվեստներ պետք է ուսումնասիրեն»[3]։

Մարքսիստական պարտիայի այս պահանջը հասկանալի է, և այն լայն կերպով իրագործվում է սովետական դպրոցում, հատկապես «Դպրոցը կյանքի հետ կապելու» մասին պարտիայի հայտնի միջոցառումներից հետո։ Բայց բուրժուական հասարակության մեջ մտավոր ու ֆիզիկական աշխատանքը անջատված են իրարից և հակադրված, շնորհիվ ծայրահեղ «սպեցիալիզացիայի և ինտենսիֆիկացիայի»։ Այս վիճակը բացասաբար է անդրադառնում մարդու առողջության վրա։ Բանվորը հյուծվում է ծանր ֆիզիկական աշխատանքից, իսկ գիտնականը, չինովնիկը և մյուսները թուլանում են մտավոր աշխատանքից։ Բացի այս բոլորից, ո՛ւմ հայտնի չէ, որ շահագործողական հասարակության մեջ ֆիզիկական աշխատանքը արհամարհված է շնորհիվ իր զարհուրելի և տաժանակիր բնույթի։ «Սոցիալիստական հասարակությունը միմիայն կարող է դարձնել ֆիզիկական գործունեությունը դրավիչ ու համակրելի»[4]։ Եվ իրոք, սոցիալիստական հասարակության պայմաններում աշխատանքը դարձել է փառքի ու հերոսության գործ։ Սպանդարյանի շարադրած պահանջները՝ դպրոցի ու դաստիարակության հարցում մարքսիստական-լենինյան պարտիայի պահանջներն են, դրանց մեկնաբանումն ու տեսական հիմնավորումը։ Այդ պահանջները, հասկանալի է, չէին կարող իրագործվել բուրժուական հասարակության պայմաններում. նրանց իրագործումը հնարավոր դարձավ միայն Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիզմի կառուցման պայմաններում։ Բայց Սպանդարյանի շարադրանքի մեջ կա մի հարց, որը լրացուցիչ մեկնաբանությունների ու բացատրությունների կարիք ունի։ Այդ հարցը վերաբերում է մայրենի լեզվին, այն հարցին, թե դպրոցներում ինչ լեզվով պետք է կրթվի մատաղ սերունդը։

Մեր պարտիայի ծրագրի 8-րդ պարագրաֆում ասված է, ազգարնակչության իրավունքը ստանալու կրթություն մայրենի լեզվով, ապահովված է պետության և ինքնավարության օրգանների հաշվով՝ դրա համար հիմնական անհրաժեշտ դպրոցներում։ Այստեղ հարցը դրված է սկզբունքային՝ կրթություն պետք է ստանան մայրենի լեզվով։

---

[1] Ա. Սպանդարյան, Երկեր, հատ. I, էջ 124։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 123։
[4] Նույն տեղում։

Ծրագրի այդ կետի պարտիական մեկնաբանություններում հարցը կոնկրետացված է և նշվում է, թե խոսքը կրթության ո՞ր աստիճանի և ո՞ր դպրոցի մասին է։ Այսպես է վարվել և Ապանդարյանը։ Նա գրել է. «Սոցիալ-դեմոկրատիան, մեկնելով պրոլետարիատի շահերից, պահանջում է, որ ստորին դպրոցներում ուսումը լինի անպայման մայրենի լեզվով»[1]։

Ստորին դպրոց ասելով, նա հասկանում է արդի տերմինոլոգիայով տրած, «առաջին աստիճանի դպրոցը»։ Ուրեմն մայրենի լեզվով կրթությունը պարտադիր է միայն ստորին ժողովրդական դպրոցներում։ Իսկ «ինչ վերաբերում է միջնակարգ և բարձր դպրոցներին,— գրում է Ապանդարյանը,— մեր կարծիքով (ընդգծումն իմն է։ — Ա. Ռ.). նրանք պիտի լինեն ընդհանուր բոլոր ազգությունների համար, որովհետև այնտեղ չկա մայրենի լեզվի այնպիսի հրամայական պահանջ...»[2]։ Ավելին, այս դպրոցները և երիտասարդ սերունդը բուն ազգության բաժանելը, Ապանդարյանի կարծիքով, կարող է ծառայել ազգայնականության գաղափարին և կգնա «այն զարգացման դեմ, որը արդեն բնորոշվել է ժամանակակից հասարակության մեջ, այն է՝ ազգերի մերձեցումը և ասիմիլյացիան»։ Պարտիայի ծրագրի 8-րդ կետը այս մեկնաբանությունը ընդհանուր առմամբ ճիշտ է, դա տարածված կարծիք է եղել։ Սաալինը, Շահումյանը և մյուս մարքսիստները նույնպես մեկնաբանել են այդ կետը, բայց այնքան չեն կոնկրետացրել, ինչպես այդ արված է Ապանդարյանի մոտ։ Ճիշտ է, Ապանդարյանը, խոսելով միջնակարգ և բարձրագույն դպրոցների մասին, վերապահություն է անում, նկատելով, թե դա իր կարծիքն է։ Իրոք, բուրժուական հասարակության պայմաններում միջնակարգ և բարձրագույն կրթություն ստանալը աշխատավորության լայն զանգվածների համար անհնար էր, և հետևաբար, կենսական անհրաժեշտություն չէր կարող լինել, որպեսզի այդտեղ ևս մայրենի լեզվի պահանջ առաջադրվեր։ Այդ պայմաններում երիտասարդությունը բուն ազգության բաժանելը, Ապանդարյանի կարծիքով, կարող էր նպաստել նացիոնալիստական տրամադրությունների զարգացմանը։

Ապանդարյանի այս կասկածը ուներ որոշ հիմքեր։ Հայտնի է, որ Իռլանդը և մյուս ազգությունների մեջ առաջ եկած բունդակցությունները կրթության, դաստիարակության հարցերը կապում էին «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» ռեակցիոն պահանջի հետ, որը մեկուսացնում էր ազգերին իրարից և վնասում տարբեր ազգերի աշխատավորության ինտերնացիոնալիստական կապերին ու բարեկամությանը։ Այս վտանգն էր թելադրել Ապանդարյանին իր ձևակերպումը։

Պարտիական ծրագրի մեկնաբանության ժամանակ մայրենի լեզվի պահանջը գլխավորապես վերաբերել է ցածր կամ առաջին աստիճանի դպրոցներին։ Այդ երևում է և Շահումյանի հարցադրումից։

«Մենք պահանջում ենք,— գրում է Շահումյանը,— որ դպրոցական գործում տիրի լեզուների կատարյալ ազատություն, որ կրթությունը, մասնավորապես սկզբնական կրթությունը (ընդգծումը իմն է։—Ա. Ռ.) արվի մայրենի լեզվով, այսինքն այն լեզվով, որով նրանք ավելի ճիշտ և ավելի շուտ կարող են սովորել։ Բայց այդ բավական չէ։ Մենք հոգում ենք ոչ միայն այն մասին, թե ինչ լեզվով են սովորեցնում երեխաներին, այլև այն մասին, թե ինչ են սովորեցնում, ինչ ոգով, ինչ ուղղությամբ են դաստիարակում մեր զավակներին»[3]։ Ստ. Շահումյանի մոտ այդ պահանջը, ինչպես կարելի է նկատել, ավելի ճկուն ու հստակ է ձևակերպված։ Կրթությունն ընդհանրապես և մասնավորապես սկզբնական կրթությունը, ասում է նա, պետք է տարվի մայրենի լեզվով։ Ստ. Շահումյանը չի մերժում միջին և բարձրագույն կրթությունը մայրենի լեզվով տանելու պահանջը, ինչպես այդ վճռականորեն արել է Ա. Ապանդարյանը։ Այլ նա ընդունելով հանդերձ դրանց անհրաժեշտությունը ավյալ ժամանակաշրջանում, ընդգծում է սկզբնական կրթությունը մայրենի լեզվով տանելու կարևորությունը։ Եվ այս մոտեցումը, այս ձևակերպումը, անշուշտ, ավելի ճիշտ է և հստակ, քան Ապանդարյանինը։ Բոլոր դեպքերում շեշտը դրվել է ցածր աստիճանի կամ սկզբնական կրթության վրա։ Այսպես է եղել անցյալում։ Բայց այսօր, սովետական հասարակարգի պայմաններում այդ մեկնաբանությունները կորցրել են իրենց ուժը։

Հոկտեմբերյան հեղաշրջման ճնշանքով տեղծված ազգային հանրապետություններում կրթությունը ցածր, միջնակարգ և բարձրագույն, կատարվում է մայրենի լեզվով և այդ դպրոցներում երիտասարդությունը ստանում է ինտերնացիոնալիստական դաստիարակություն։ Կյանքը ինքը որոշ ճշտումներ մտցրեց Ապանդարյանի հարցադրումների մեջ։

---

[1] Ա. Ապանդարյան, Երկեր, հատ. I, էջ 125։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 126։

[4] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 395։

Լեզուն, ինչպես բուրժուական, այնպես էլ սովետական դպրոցում, վերջին հաշվով ձև է։ Դարերը կրթության, դաստիարակության բովանդակությունն է, նրա դասակարգային էությունը։

Այս հարցերը ավելի խորն են ձեւակերպված Ստ. Շահումյանի մոտ, որի մի աշխատությունը «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» Ս.Սպանդարյանը հանձնարարել է ընթերցողների ուշադրությանը։

Իրոք, Շահումյանի այդ և հատկապես «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատության մեջ մենք հանդիպում ենք կրթության ու դաստիարակության հարցերի ավելի խոր մեկնաբանության։

Ինչպես տեսանք, Ստ. Շահումյանը մայրենի լեզվի պահանջի անհրաժեշտությունը պաշտպանելով ու հիմնավորելով հանդերձ, միաժամանակ ընդգծում է դաստիարակության դասակարգային բովանդակության վճռական նշանակությունը։ Իհարկե, բուրժուական դպրոցները, ասում է նա, կանգնած չեն ցանկալի բարձրության վրա։ Ընդհակառակը, նրանք այնքան վատ են, որ ավելի վատ կարծես չէին կարող լինել։ «Բայց երբ հիշում ենք այն բոլոր դառնությունները, որ զգացել է յուրաքանչյուրը մեզանից, ով անցել է այդ դպրոցների բովից,— մեզ սարսափեցնում է ամենից առաջ ոչ թե օտար լեզուն,— գրում է Շահումյանը,— այլ այն ոգին, այն ուղղությունը, այն սրբագիրը, որ տիրում է այդ դպրոցներում։ Օտար լեզվի ազդեցությունը զգացվում է միայն սկզբնական շրջանում, բայց թե նույն այդ սկզբնական շրջանում և թե հետո մինչև վերջը ամենից վնասակարը, խեղդողը, սարկայնողը այդ դպրոցներում իշխող Պորեդոնոսցևների և Իլովայսկիների ոգին է, այն ոգին, որ այնքան անհրաժեշտ է եղել իշխող դասակարգի համար... Որքան էլ կարևոր լինի լեզվի խնդիրը, նա, համենայն դեպս, մի մասն է միայն, և համեմատաբար երկրորդական մասը դպրոցների վրա ծանրացած ընդհանուր դասակարգային բաղադրությանը»[1]։ Այսպիսով, մարքսիստների համար ոչ միայն ընդհանուր ըմբռնում է եղել մայրենի լեզվի պահանջը, հատկապես սկզբնական կամ «ստորին ժողովրդական դպրոցներում», այլև կրթության ու դաստիարակության դասակարգային բնույթի հարցը։

II

Մեկնաբանելով ու հիմնավորելով պարտիայի ծրագրային պահանջները դպրոցի ու կրթության վերաբերյալ, Սպանդարյանը, սակայն, չի սահմանափակվել դրանով։ Մի շարք հոդվածներում ու ակնարկներում նա ցույց է տվել դպրոցների անմխիթար վիճակը, կրթության գործի նկատմամբ եղած անտարբեր վերաբերմունքը իր բոլոր բացասական հետևաններով, բարձրագույն կրթության արատավոր կողմերը ցարիզմի պայմաններում, Կովկասի երկրային համալսարան հիմնադրելու անհրաժեշտությունը և վերջապես լուսաբանել է ժողովրդական համալսարանների և ընդհանրապես ժողովրդական լուսավորության գրվածքն ու խնդիրները։

Նկարագրելով դպրոցներից դուրս մնացած երեխաների ու նրանց ծնողների տանջալից տրամները ու բողոքը, Ս. Սպանդարյանը փաստերով ցույց է տալիս, թե ինչպես միջոցները ծախսվում են երկրորդական պետերի վրա, իսկ դպրոցներ չեն կառուցվում, ուր կարողանան սովորել կրթության ծարավի երեխաները։

«Ժողովուրդը,— ասում է Սպանդարյանը,— սովորել է ուզում, գիտություն ու լույս է ուզում, նա գիտակցել է գրագիտության մեծ նշանակությունը, իսկ նրան մերժում են, փոխանակ լայնորեն ու հյուրընկալությամբ բանալու նրա առջև դպրոցական դռները»[2]։

Ազգաբնակչության լայն խավերի այդ պահանջը անիրագործելի էր ցարական կարգերի պայմաններում, որովհետև իշխող դասակարգերը շահագրգռված չէին ժողովրդի լուսավորությամբ գործով. չկային դպրոցներ, չկային ուսուցիչներ։ Իսկ բաղաքներում ուսուցիչների նշանակումը տեղի էր ունենում ոչ թե գործի շահերից ելնելով, այլ խնամիության ու միջնորդությունների միջոցով... Որանից տուժում էր դասավանդման որակը։

Պատասխանելով իր քննադատներին, Սպանդարյանը մի առիթով գրել է. «Ուսուցչուհիների մեջ լավ, գիտակ, փորձառու աշխատավորներ շատ կան—ես այդ փաստը չեմ ժխտել։ Ինձ փաստի այլ կողմն էր հետաքրքրում. թե նրանք ինչպե՞ս են ընկել բաղաքային դպրոցները»[3]։ «Ես մեղադրել եմ ոչ թե ուսուցչուհիներին, այլ,—ավելացնում է Սպանդարյանը,— խնամիության,

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 396—397։
[2] Ս. Սպանդարյան, Երկեր, հատ. II, Երևան, 1959, էջ 37։
[3] Նույն տեղում, էջ 25։

ազգակցության և պրոտեկցիայի» այն զգվելի մթնոլորտը, որ անկասկած տիրում է դպրոցական հանձնաժողովում, և նման բարքերը չեն կարող չվնասել ժողովրդական դպրոցին։

Դատապարտելով այդ և նման երևույթները դպրոցական գործում, բոլշևիկ հրապարակախոսը պահանջում է «հասարակական բոլոր կենդանի ուժերից» պայքարել նման բարքերի դեմ հանուն ժողովրդական լուսավորության նորմալ կազմակերպման ու աշխատավորության պահանջների բավարարման։

Սեր հրապարակախոսին չեն բավարարում ոչ միայն դպրոցական գործի ընդհանուր դրությունը, այլև դաստիարակության ուղղությամբ կատարված կոնկրետ ձեռնարկումները։ Ահա մի փաստ։ Չափազանց օգտակար և անհրաժեշտ էր «մանկական ակումբի» կազմակերպումը, որը տեղի է ունեցել Թիֆլիսում և որի նպատակն էր «նոր», «ազատ» սկզբունքներով ու հիմունքներով արտադպրոցական դաստիարակություն տալ երեխաներին, հատկապես համակրելի է անապատան երեխաներին հավաքելու և նրանց խելքի ու սրտի վրա խելացիորեն ազդեցություն ունենալու ցանկությունը։ Նման միջոցով,— ասում է Սպանդարյանը,— կարելի է արթնացնել նրանց մեջ «մարդը», «փայփայել, բարի խոսքով դուրդուրել նրանց, որի կարիքն այնքան շատ են զգում նրանք, պայքարել «փողոցի կյանքի» այն ապաքանչ ազդեցության դեմ, որին ենթարկվում են նրանց զգացումը, ինքուշ հոգիները»։ Բայց նման բարի և լավ գործերը՝ երեխաների, «կյանքի այդ ծաղիկների» նկատմամբ չեն կարող իրագործվել շահագործողական հասարակության պայմաններում։ Եվ այդ ձեռնարկությունը, իրոք, իր նպատակին չի ծառայում և խափանվում է շատ այլ ձեռնարկումների նման։

Սպանդարյանը այդ երևույթը բացատրում է նրանով, որ խոստումներ անողներն ու բարի ցանկություն ունեցողները շատ են, իսկ գործի մարդիկ, հասարակության անշահախնդիր ծառայելու ցանկությամբ լցված մարդիկ դրանց շարքերում չկան։ Եվ նրա հոդվածը՝ «Էլի մի լավ դիտավորության» մասին, ավարտվում է տխուր ակորդով.

«Այսպես մեզանում խորտակվում են բոլոր ձեռնարկությունները, այսպես մեզանում եռանդը չի պակասում միայն խոսքեր շռայլելու համար, այսպես մեզ վիճակված են միայն բարի ձգտումներ, իսկ կատարել ոչինչ չենք կարող»[2]։ Այս երևույթի պատճառները առանց բացատրությունների էլ հասկանալի են։ Տիրող իրավակարգը հնարավորություն չի ընձեռում իրագործելու բարի ցանկությունները անգամ այն լիբերալ ինտելիգենտների, որոնք հեռու են գործից ու պայքարից և որոնք ընդունակ են, Նեկրասովի խոսքերով ասած՝ միայն շաղակրատել, իսկ գործել՝ ոչ։

Կրթության ու լուսավորության հարցերին նվիրված Ս. Սպանդարյանի հոդվածներից ցայտուն կերպով երևում է, թե ինչպիսի ծանր ու անմխիթար վիճակ է եղել այդ ասպարեզում ռեակցիայից առաջ։ Նկատի ունենալով այդ դրությունը, Սպանդարյանը հարց է տալիս. «Վերջ կդրվի՞ արդյոք իրերի այսպիսի դրություններ և մենք շուտո՞վ արդյոք ձեռք կբերենք ընդհանուր համաժողովրդական ձրի պարտադիր ուսուցում»[3]։ Իրերի այդ դրությունը կարող է վերջ դնել միայն սոցիալիստական հեղափոխությունը։ Այս հանգամանքը շատ լավ էր գիտակցում ինքը Սպանդարյանը, և նրա հոդվածները համակված են վերահաս ռևոլյուցիայի սպասումով։ Նրա ցանկությունն ընդհանուր պարտադիր ուսման մասին կարող էր իրագործվել և իրագործվեց միայն սովետական հասարակարգի պայմաններում։

Իր գրական գործունեության մի զգալի մասը, ինչպես նկատել ենք, Սպանդարյանը նվիրել է կրթության ու լուսավորության հարցերին։ Եվ դրանց քննության ժամանակ նա հանդես է բերել զարմանալի սրատեսություն ու հոգատարություն, բացառիկ եռանդով ու կրքոտությամբ պայքարել է ժողովրդի իրավունքների համար, նոր սերնդի երթությունն ու դաստիարակությունը նորմալ հիմունքներով կազմակերպելու համար։

Ս. Սպանդարյանը, սակայն, չի բավարարվել սոսկ դպրոցական գործի անմխիթար վիճակի բացահայտմամբ ու քննադատությամբ։ Իր հոդվածներում ու նամակներում, հատկապես երեխաներին հասցեագրած նամակներում, նա լուրջ ուշադրություն է դարձրել դաստիարակության բովանդակությանն ու մեթոդներին, առանձնացրել այն առարկաները, որոնք չափազանց կարևոր են ընդհանուր զարգացում ունենալու համար։ Ս. Սպանդարյանը, օրինակ, երեխաներին

---

[1] Ս. Սպանդարյան, Երկեր. հատ. II, էջ 2-6։

[2] Նույն տեղում, էջ 227։

[3] Նույն տեղում, էջ 37։

խորհուրդ է տալիս «շատ կարդալ բնագիտությունից։ Այ, ես շատ քիչ բան գիտեմ բնության մասին և հաճախ տուժում եմ դրանից։ Ժամանակ ունես՝ կարդա, սովորիր»[1]։

Սպանդարյանը երեխաներին մոտենում է որպես հմուտ մանկավարժ, խորհուրդներ է տալիս, երբեմն հանդիմանում, երբեմն սիրաշահում և միշտ հանդես է գալիս որպես սրատես ու հոգատար հայր, որպես բարեկամ ու ավագ ընկեր։

Հիշելով, որ իր դասերը՝ Մարուսյայի ուսման գործերը վատացել են, գնահատականները իջել են, նամակներում կան սխալներ, Սպանդարյանը բարեկամաբար հարց է տալիս. «Ի՞նչ է պատահել, աղջիկս, դու նույնիսկ այնպիսի առարկաներից, ինչպիսիք են պատմությունն ու աշխարհագրությունը, հազիվ կարողանում ես 3 ստանալ... Քո այդ անշեղորեն ընկնող հաջողություններն ինձ շատ են անհանգստացնում և մտահոգություն պատճառում... Իհարկե,— ավելացնում է հայրը,— ես այն կարծիքը չունեմ, թե թվանշանները իսկապես ճիշտ կերպով են որոշում ու չափում աշակերտների գիտելիքների պաշարը, բայց և այնպես,— գեթ հարաբերական չափով, նրանք ինչ-որ գաղափար տալիս են աշակերտի գիտեցածի մասին»[2]։ Մի այլ առիթով նա գրում է, որ իրեր ուրախ կլիներ, եթե Մանյուրկայի զարգացմանը հետաքրքրող ու հուզող հարցերի մասին դասեր «ոչ թե թվանշաններից, այլ նամակների բովանդակությունից»[3]։ Բրիշ նամակներում նա երեխաներից պահանջում է լեզուների, հատկապես եվրոպական (գերմաներեն, ֆրանսերեն) և հայերեն լեզուների տիրապետում։ Բացատրելով դրանց նշանակությունը, նա գրում է. «Ինչպե՞ս է ձեզ մոտ լեզուները սովորելու գործը։ Չէ՞ որ մաման լավ գիտե ֆրանսերեն, իսկ դուք այժմ այնպիսի հասակ ունեք, որ հեշտությամբ կարող եք յուրացնել ֆրանսերենը։ Մամուսիսյին ստիպեցեք, որ ֆրանսերեն խոսի ձեզ հետ։ Ես շատ կուզեի, որ դուք սովորեիք հույներեն կարդալ, խոսել և գրել...»[4]։ Այս խորհուրդները տալուց հետո, Սպանդարյանը հարցը ընդհանրացնում է. «Լեզուները իմանալը չափազանց կարևոր ու անհրաժեշտ է բոլոր տեսակետներից։ Մաման ձեզ կասի, թե եվրոպական լեզուների տիրապետելն ինչ նշանակություն ունի կրթության—գիտելիքներ ձեռք բերելու համար»[5]։

Հարկ է նկատել, որ կրթության ու դաստիարակության հարցերին նվիրված Սպանդարյանի հոդվածներն ու ասույթները չեն սահմանափակվում վերևում նշվածով։ Նա շատ լավ գիտակցում էր, որ կրթության ու դաստիարակության հարցերը սերտորեն կապված են ուսուցչական կադրերի հետ։ Ժողովրդական ուսուցիչների ծանր նյութական ու բարոյական դրության մասին Սպանդարյանը սպառիչ պատկերացում է տվել, ինչպես նշել ենք «Սոցիալ-դեմոկրատիան և դպրոցական հարցը» հոդվածում։ Բարձրագույն դպրոցները, այլ խնդիրների հետ միասին, ունեն և այն կարևոր խնդիրը, որ տարրական ու հատկապես միջնակարգ դպրոցների համար պատրաստեն որակյալ ուսուցչական կադրեր։ Բարձրագույն կրթության հարցը, որպես ժողովրդի կուլտուրականության ու բաղաքակրթության կարևոր ցուցանիշ—զբաղեցրել է և Ս. Սպանդարյանի միտքը, դարձել նրա հրապարակախոսության համար թեմա։

«...Առանց բարձրագույն կրթության, առանց ինտելիգենտական ուժերի, մեզ համար անկարելի կլիներ բարձրացնել երկրի կուլտուրական մակարդակը, դուրս բերել նրան ծանր ժամանակների անմխիթար վիճակից, բարձրացնել և կանոնավոր հիմքերի վրա դնել հենց... ստորին և միջնակարգ կրթությունը...»[6]։

Այսպես ճիշտ պատկերացնելով բարձրագույն կրթության դերն ու նշանակությունը երկրի կուլտուրական մակարդակի բարձրացման գործում, Սպանդարյանը լուրջ ուշադրություն է դարձնում Կովկասյան բարձրագույն դպրոց ստեղծելու հարցին, ողջունում է երկրամասի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Կանանց բարձրագույն դասընթացները, որը 1910 թ. տոնում էր իր գոյության առաջին տարին։ Սպանդարյանը անկեղծորեն ոգևորված է այդ բանով. նա գրում է. «Կուլտուրայի տոն։ Մեր երկրամասը վաղուց է սպասում բարձրագույն ուսումնական հաստատության, լույսի և գիտության օրորանի և օջախի և մինչև այժմ դեռևս չէր հասել դրան։ Կհասնի՞ արդյոք։ Վերջապես ոկիզբ կդրվի՞ արդյոք լայնորեն դրված համալսարանական գիտության ոգնությամբ մեր հարուստ, բազմազան և բազմացեղ երկրամասը՝ կենցա-

[1] Ս. Սպանդարյան. Երկեր, հատ. II, էջ 319։
[2] Նույն տեղում, էջ 144։
[3] Նույն տեղում, էջ 319։
[4] Նույն տեղում, էջ 327։
[5] Նույն տեղում, էջ 328։
[6] Նույն տեղում, էջ 231։

ղի իր յուրահատուկ պայմաններով, կուլտուրայի և աշխարհայացքի իր տարբեր աստիճաններով — բազմակողմանի ուսումնասիրելուն»[1]։

Մի փաստից Սպանդարյանը մեծ ընդհանրացում է կատարում և լուրջ պահանջ առաջադրում։ Բրեն հոդող հարցին՝ Կովկասյան համալսարանի հիմնադրմանը նվիրված հատուկ հոդվածում, որը այդպես էլ կոչվում է՝ «Կովկասյան համալսարան», բնութագրելով հարցի պատմությունն ու վեճերի էությունը, Սպանդարյանը նշում է, որ Կովկասյան երկրամասի 19 միլիոն բնակչությունը վաղուց արդեն «գիտության ու լուսավորության բարձրագույն օջախի կարիք է զգում», սակայն գործը մինչև հիմա գլուխ չի եկել։ Սայլը տեղից չի շարժվել։

Բ կողմից հիմնավորելով բարձրագույն դպրոցի հարցը, Սպանդարյանը ելնում է այն միակ ճիշտ, գիտական դիրքից, որը հաշվի է առնում Կովկասի ազգային բազմազանությունը և համապատասխան պայմանները։ Նա հարց է դնում, որ բարձրագույն կրթություն ստացող երիտասարդությունը ծանոթ լինի բնակչության ոգուն ու կենցաղին, նրա պատմական զարգացմանն ու տրադիցիաներին և Կովկասը չլինի նրանց համար մի «անծանոթ երկիր»՝ լեցուն ինչ-որ ֆանտաստիկ առասպելներով ու անեկդոտներով այդ «կորստաբեր» երկրի մասին[2]։ Այս տեսակետից Ռուսաստանի կենտրոնում համալսարանական կրթություն ստացած անձնավորությունը չի ստանում այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են Կովկասի նման յուրահատուկ պայմաններում աշխատելու, «ծայրամասերի բարեկեցության բարձրացման նպատակով արդյունավետ աշխատանք կատարելու համար»։ Այսպես է հիմնավորում նա իր առաջարկությունը։ Ղեկավարվելով այս սկզբունքով, Սպանդարյանը մերժում է տեխնիկական բարձրագույն կրթության օջախ ստեղծելու առաջարկը և պաշտպանում է համալսարան ունենալու պահանջը։ «Երկրի բնակչության բազմազանությունը, առանձին ժողովուրդների կուլտուրայի մակարդակի տարբեր աստիճանները, նրանց կենցաղը, բարքերը, նրանց կյանքի ողջ ձևն ու եղանակը, նրանց պատմությունը, լեզուն, կրոնական պաշտամունքը,— այս ամենը գիտական մշակության և հետազոտության համար այնքան հարուստ մի գանձարան է հանդիսանում, որ այդ գործի համալսարանական դրվածքով միայն կարող են էական նվաճումներ ձեռք բերվել գիտության համար և երկրամասի ու նրա բնակչության մտավոր և նյութական առաջադիմության համար»[3]։

Այսպիսի կրքոտությամբ պաշտպանելով Կովկասյան համալսարանի անհրաժեշտության հարցը, Սպանդարյանը խորապես գիտակցում էր, թե ինչպիսի խոշոր նշանակություն կունենա այն երկրամասի կուլտուրայի ու գիտության զարգացման գործում։

Նա չի սահմանափակվում միայն հարցի սկզբունքային դրվածքի հիմնավորմամբ, նա իր հոդվածում խոսում է և համալսարանական կրթության հետ կապված այլ հարցերի մասին, հատկապես ուշադրություն է դարձնում թոշակների բաշխման սկզբունքի վրա։

Սպանդարյանի համար պարզ էր, որ ցարական կառավարությունը, նրա լուսավորության մինիստրությունը ամեն ձևերով ու միջոցներով աշխատելու է փակել աշխատավորական տարրերի մուտքը բարձրագույն դպրոցները։ Այս առումով թոշակների ճիշտ բաշխումը կարող է, ընդհակառակը, նպաստել այն բանին, որ «խոհարարների երեխաները» ավելի շատ նստարաններ գրավեն բարձրագույն դպրոցներում։ Մինչդեռ կովկասյան մամուլում պաշտպանվել է թոշակների բաշխման այնպիսի սկզբունք, որի իրագործումը կարող է միայն նպաստել լուսավորության մինիստրության ռեակցիոն բաղաքականությանը։ Մամուլում արծարծված տեսակետներից մեկն էլ այն էր, որ իբր ցարական Ռուսաստանում գոյություն ունի ինտելիգենտական ուժերի գերարտադրություն։

Սպանդարյանը կետ առ կետ հերքում է այդ և նման տեսակետները, ցույց է տալիս դրանց անհեթեթ բնույթը։ Ինտելիգենցիայի գերարտադրության դաղափարը անհիմն է, ասում է Սպանդարյանը, և վիճակագրությունը հակառակն է ապացուցում։ Անծայրածիր Ռուսաստանի ժողովուրդները մեծ պակաս են զգում բժիշկների, իրավաբանների, տեխնիկների, մանկավարժների և այլոց։ Իսկ ինչ վերաբերում է այն պահանջին, թե թոշակներ պետք է տրվեն միայն տաղանդավոր երիտասարդներին և ոչ թե կարիքավորներին, Սպանդարյանը ծաղրանում է այդ տեսակետի դեմ։ Չէ՞ որ դժվար է որոշել տաղանդավորության աստիճանը։ Եվ փաստերով հերքում է այդ ու նման պատճառաբանությունները, որոնց նպատակն է արդելակել «չունևոր երիտասարդ-

---

[1] Ս. Սպանդարյան. Երկեր, հատ. II, էջ 70։

[2] Նույն տեղում. հատ. I, էջ 267։

[3] Նույն տեղում, էջ 266։

[4] Նույն տեղում.

ների դեպի համալսարաններն ունեցած» ձգտումը և նրանց հասարակական օգնություն հասցրնելը»[1]։ Ի հակադրություն այդ առաջարկների, Սպանդարյանը առաջնորդվում է այլ սկզբունքով՝ պաշտպանում աշխատավորության, չքավոր խավերի շահերը։ «Հասարակության կողմից հասարակական լայն օգնությունը բոլոր նրանց, ովքեր ձգտում են դեպի բարձրագույն ուսումը, բայց նյութական միջոցներ չունեն,— անհրաժեշտ է, խելացի և արդարացի... Ահա խնդրի միակ ճիշտ դրվածքը»,— գրում է Սպանդարյանը[2]։

Ինչպես կարելի է նկատել, բոլշևիկ հրապարակախոսը բոլոր դեպքերում ելակետ ունի աշխատավորության շահերը, պաշտպանում է ժողովրդի, նրա զավակների արդարացի իրավունքը— կրթություն և այդ թվում բարձրագույն կրթություն, ստանալու մասին։ Թոշակների բաշխման սկզբունքը, ինչպես և ուրիշ շատ գործնական հարցեր, Սպանդարյանի գրչի տակ ընդհանրանում և ստանում են խոր քաղաքական կամ տեսական բնույթ։ Եվ դրանք, այդ հարցերը լուսաբանվում ու լուծվում են հասարակական առաջավոր ուժերի դիրքերից, աշխատավոր մասսաների պահանջների համաձայն։

Կուլտուրայի և գիտության պատմությանը լավատեղյակ Ս. Սպանդարյանին հայտնի է, թե ցարական Ռուսաստանում ինչպիսի խոշոր դեր է խաղացել Մոսկվայի համալսարանը՝ Ռուսաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը, գիտության ու առաջավոր գաղափարների տարածման գործում։

«Մոսկվայի համալսարանը—ռուսաստանյան ինտելիգենցիայի մեծամասնության այդ alma mater-ը (սնող մայրը)—զանազան հասարակական ուժերի պայքարի իրադարձությունների, լույսի ու խավարի, ճնշման ու ազատության, կյանքի ու մահվան սկզբունքների ընդհարման պայմաններում, ռուսական կյանքի ընթացքում միշտ էլ բարձր է պահել ազատ գիտության դրոշակը, գիտական ազատ հետազոտության, առաջադիմության և սոցիալական արդարության սկզբունքները»[3]։

Բացահայտելով համալսարանի պատմական նշանակությունը ռուսական կուլտուրայի ու գիտության զարգացման և նշանավոր գեմքեր դաստիարակելու գործում, Սպանդարյանը միաժամանակ նշում է այն հալածանքները, որոնց նոր ժամանակներում, XX դարի սկզբներին, ենթարկվում են համալսարանները, պրոֆեսուրան, ուսանող երիտասարդությունը։ «Անցյալի բոլոր մութ ուժերը անհարեկված արշավանք են գործում համալսարանների դեմ, ազատ գիտության դեմ»[4]։ Այդպիսի հալածանքի ցայտուն փաստաթուղթ է հանդիսանում «Համալսարանական նոր կանոնադրությունը», մշակված Լուսավորության մինիստրության կողմից։ Այդ առթիվ գրած հատուկ հոդվածում Սպանդարյանը բացահայտում է նոր կանոնադրության ռեակցիոն բնույթը, կանոնադրություն, որը «կատարյալ հրաժարումն է ավտոնոմիայից, 1905 թվականի օգոստոսի 27-ի հրովարտակից»։ Այդ կանոնադրությամբ պրոֆեսորների խորհրդի դերը իջեցվում է աննշան չափերի, գիտության տաճարի պատերի մեջ մուծվում է ոստիկանական հսկողություն՝ հանձին «պրիստավների» և բացարձակ կերպով արգելվում են ուսանողական ամեն տեսակ, նույնիսկ զուտ գիտական, ներ-մասնագիտական կազմակերպությունները։

Նոր կանոնադրությունը ավելի է փաստացնում դրությունը, դա մի քայլ դեպի ետ է անգամ «հուշակավոր 1884 թվականի կանոնադրությունից»։ Ռեակցիոն այս հարձակումները գիտության ու լուսավորության օջախների դեմ պատահական չէին։ Ռևոլյուցիոն շարժման վերելքի հետանկարից սարսափած, ցարական չինովնիկները ցանկանում էին կանխել նրա հետագա ծավալումը և ամեն տեսակի արգելքներ ու խոչընդոտներ էին հարուցում առաջավոր ուժերի ու առաջավոր գիտության դեմ։ Բայց հաղթանակը վերջին հաշվով հեղափոխական ուժերի ու առաջավոր գիտության կողմն էր։ Այդ հավատով էր տոգորված և Սուրեն Սպանդարյանը։ Նա գրում է. «Անոր փորձությունները են պատրաստվում մեր գիտության, մեր համալսարանների դեմ, բայց և այնպես կենդանի ոգին, կենդանի սկզբունքը, անցնելով բոլոր տանջանքներից դուրս կգան հաղթանակով և նորոգված։ Դրա երաշխիքը համաշխարհային պատմությունն է, դրա գրավականը ավելի և ավելի զարգացող և դեպի առաջ ընթացող մարդկության կյանքի երկաթե տրամաբանությունն է»[5]։

1. Ս. Սպանդարյան, Երկեր, հատ. I, էջ 251։
2. Նույն տեղում, էջ 253։
3. Նույն տեղում, հատ. II, էջ 150—151։
4. Նույն տեղում, էջ 13։
5. Նույն տեղում, էջ 151։

III

Սպանդարյանը, գինված մարքսիզմով, հասարակության զարգացման օրենքների միակ գիտական ուսմունքով, պարզ ու հստակ տեսնում էր, որ հեղափոխակը, ի վերջո, լինելու է պրոլետարիատի ուժերի կողմը, բանվոր դասակարգի ու ընդհանրապես աշխատավոր մասսաների կողմը։ Բայց հեղափոխակը ինքնաբերաբար չի գալիս, այն պետք է նվաճել, նվաճել համառ ու հետևողական պայքարով, մասսաների կազմակերպման ու դասակարգային գիտակցության զարգացման միջոցով։ Իսկ այս բոլորին կարելի է հասնել օգտագործելով ոչ միայն անլեգալ միջոցները, այլև լեգալ հնարավորությունները, որ աշխատավորությունը ձեռք էր բերել իր պայքարի ու մեծագույն զոհաբերությունների գնով։ Այս տեսակետից լուրջ խնդիրներ էին դրվում ժողովրդական տների ու ժողովրդական համալսարանների վրա և ընդհանրապես բանվորական ինքնագործունեության ու լուսավորության զարգացմանը նպաստող բոլոր տեսակի ձեռնարկումների վրա։

Թերևս սրանով է պետք բացատրել այն մեծ հետաքրքրությունը, որ հանդես է բերել բոլշևիկ հրապարակախոսը ժողովրդական տների ու բանվորական միությունների կուլտուրական ու լուսավորական գործունեության հարցերի նկատմամբ։

Սպանդարյանի մի շարք հոդվածներում («Կուլտուր-լուսավորական աշխատանքը», «Ժողովրդական տուներ», «Բանվորների ինքնագործունեության ընկերությունները», «Ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերության գործունեության շուրջը» և այլն) լուսաբանվում են ժողովրդական տների ու ժողովրդական համալսարանների վիճակն ու խնդիրները, քննադատվում է բանվորական լայն մասսաների կրթության ու դաստիարակության գործով զբաղվող կազմակերպությունների աշխատանքի անբավարար դրվածքն ու լուրջ թերությունները։

Բացահայտելով ժողովրդական համալսարանի ու ժողտան աշխատանքների վատ կազմակերպվածությունը և անմխիթար վիճակը, և դատապարտելով այդ լուրջ գործի նկատմամբ անլուրջ վերաբերմունք ունեցողներին, Սպանդարյանը միաժամանակ գործունեության ծավալուն ծրագիր է տալիս, նշում է այն հիմնական խնդիրները, որոնք անհրաժեշտ է իրագործել, ապահովելով բանվորների քաղաքական լուսավորության ու դաստիարակության գործը։

«Գիտակցականությունը բանվոր դասակարգի պայքարի հաջողության կարևորագույն պայմաններից մեկն է։ Յուրաքանչյուր կազմակերպության ամուր հիմնաքարը—այդ նրա անդամների գիտակցությունն է։ Վերջինս ձեռք է բերվում նաև գիտելիքներ կուտակելու միջոցով»։ Բանվոր դասակարգի և ընդհանրապես աշխատավորների դասակարգային գիտակցությունը զարգացնելու և ընդհանրապես կուլտուրական մակարդակը բարձրացնելու կարևոր լեգալ միջոցներից էին ժողովրդական համալսարանները և ժողովրդական տները՝ իրենց կուլտուր-լուսավորական գործունեությամբ։

Բայց իրականում այդպես չէր։ Ժողտները և ժողովրդական համալսարանները գտնվում էին ոչ թե բանվորական արհեստակցական միությունների հսկողության տակ, ոչ թե նրանց կողմից էին ղեկավարվում, այլ ունեոր դասակարգերի ներկայացուցիչների, այսպես կոչված ինտելիգենտների։ Ժողովրդական համալսարանների և ժողտների վարչությունները նույնիսկ բանվորական պրոֆմիությունների ներկայացուցիչներ չունեին։ Այս դրությունը Սպանդարյանը համարում էր անհանդուրժելի և խիստ քննադատում նման բաղադրականություն։ Ճիշտ է, ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում բանվորական երիտասարդ արհեստակցական միությունները բնականաբար իրենց գործունեության մեջ գլխավոր ուշադրությունը դարձնում էին տնտեսական պայքարի հարցերի վրա և անհրաժեշտ ուշադրություն չէին դարձնում իրենց գործունեության «մյուս, ոչ պակաս կարևոր կողմի վրա, այն է՝ կուլտուր-լուսավորական աշխատանքը բանվորական լայն մասսաների մեջ»[2]։ Սպանդարյանը պրոֆմիությունների ուշադրությունը կենտրոնացնում է այդ հարցերի վրա և առաջարկում անհապաղ օգտագործել բոլոր հնարավոր միջոցները և ծավալել կուլտուր-լուսավորական աշխատանքները, և այդ աշխատանքի արդյունքները «լուսավորել թեորետիկական գիտակցության լույսով», «ընդհանրացնել և արմատավորել բանվորական մասսաների մեջ»[3]։

Եվ այդ բոլոր ձեռնարկությունների նպատակը պետք է լինի՝ «բանվորների դասակարգային ինքնագիտակցության զարգացման գործը դնել ամենալուրջ հիմքերի վրա»։ Այս տեսակետից գոյություն ունեցող ժողովրդական տները մեծ անելիքներ ունեն։ Դրանք «կարելի է և պետք է

[1] Ս. Սպանդարյան, Երկեր, հատ. I, էջ 209։
[2] Նույն տեղում, էջ 151։
[3] Նույն տեղում, էջ 173։

դարձնել բանվորների լուսավորման կենտրոններ, բանվորական համալսարաններ»։ Այսպես բարձր էր գնահատում Սպանդարյանը ժողովրդական տների գործունեությունը և պահանջում էր, որ իրենք բանվորներն ու բանվորական կազմակերպությունները չեզոք չմնան այդ գործում, ինչպես նկատվում էր մինչ այդ, այլ ակտիվ միջամտեն «լուսավորության ու զվարճալիքի գործի դրվածքին»։ «Անհրաժեշտ է միջամտել այդ բնագավառին, անհրաժեշտ է այն ամբողջովին վերցնել յուր ձեռքը,— գրում է Սպանդարյանը։— Հարկավոր է ճիշտ դնել գրադարանային գործը, հարկավոր է պատշաճ բարձրության հասցնել բանվորական թատրոնը և վերջ տալ այն չիլափլավին, որ իրենից ներկայացնում է թատրոնական ռեպերտուարը ժողովրդական տներում՝ ամբողջ գործի ժամանակակից դրվածքի պայմաններում»[2]։ Բացի այդ բոլորից, ժողովրդական տների հիմնական խնդիրներից են նաև բանվորական ինքնակրթական ընկերությունների ստեղծումն ու նրանց գործունեության ծավալումը։

«Բանվոր դասակարգը միշտ էլ զգացել է գիտության անհրաժեշտությունը, կրթության անհրաժեշտությունը»,— ասում է Սպանդարյանը և ավելացնում, որ ցարական Ռուսաստանում շարունակ հարուցվել են և հարուցվում են խոչընդոտներ բանվորների ինքնագործունեության դեմ։ Համեմատություն անցկացնելով եվրոպական երկրների հետ, Սպանդարյանը նշում է, որ արևմտաեվրոպական երկրներում բանվորները իրենց պայքարի շնորհիվ «ավելի շուտ են ձեռք բերել ազատ կազմակերպվելու, իրենց կարիքները ու իրենց պահանջները ազատորեն բավարարելու հնարավորություններ»[3]։

Այս տեսակետից հատկապես մեծ հաջողությունների է հասել գերմանական բանվորությունը և նրանց փորձը շատ ուսանելի է։ Ճիշտ է, ժամանակին գերմանական բուրժուազիան փորձել է իր ձեռքն առնել «բանվորների կրթության գործը և այդպիսով տնտեսական ստրկացմանն ավելացնել նաև հոգևոր ստրկացումը. Սակայն զարգացող դասակարգային պայքարը շուտով անհրաժեշտ դարձրեց այս տեսակետից ևս սահմանազատվել բուրժուազիայից, թեկուզ և ամենադեմոկրատականից։ Գերմանական բանվորները սկսեցին հիմնել իրենց սեփական, զուտ պրոլետարական կրթական ընկերությունները, որտեղ բանվորները, գիտելիքներ ձեռք բերելով, դրա հետ միասին նաև դաստիարակվում էին խիստ դասակարգային ոգով»[4]։ Այնուհետև Սպանդարյանը թվարկում է այդ ընկերությունների կոնկրետ ձեռնարկումները՝ դպրոցների հիմնադրման, զանազան տիպի դասընթացներ բաց անելու ուսպարեզում և այլն։ Գերմանական բանվորության պատմական փորձի հիշատակմամբ Սպանդարյանը ցանկանում է ասել, որ Ռուսաստանում և նրա մի մասը հանդիսացող Անդրկովկասում՝ Բաքվում և Թիֆլիսում և այլ վայրերում նույնպես կարելի է հիմնադրել բանվորական ինքնակրթական ընկերություններ և ծավալել նրանց գործունեությունը։ Այդ ասպարեզում եղած առաջին անհաջողությունները չպետք է ընկնեն բանվորներին։

Մեզանում, Ռուսաստանում — ասում է Սպանդարյանը,— այդպիսի կրթական ընկերություններ, բանվորական ակումբներ կազմակերպելու փորձեր եղել են Պետերբուրգում, բայց շուտով դրանք կործանվել են։

Պետերբուրգում կազմակերպվել է նաև ժողովրդական համալսարան, որը նույնպես կործանվել է։ Ինչո՞ւմն է բանը, որո՞նք են այդ անհաջողության պատճառները։

Ժողհամալսարանների կազմակերպման նախաձեռնությունը պատկանում է ինտելիգենցիայի դեմոկրատական տարրերին։ Բայց նրանք, այդ տարրերը հեռու են բանվորական կազմակերպություններից։ Ավելին, Ժողհամալսարանի կազմակերպիչները վարակված լինելով բուրժուական նախապաշարմունքներով, մերժում են բանվորների պրոֆեսիոնալ միության ներկայացուցիչներին տեղ տալ ժողհամալսարանի վարչության կազմում, այն պատճառաբանությամբ, թե դիտությունը «ապադասակարգային» է։ «Դրա հետևանքը եղավ նրա բնական մահը — գրում է Սպանդարյանը,— որովհետև բանվորները այլևս չէին գալիս լսելու նրանց «ապադասակարգային գիտությունը»[5]։

Այս պատմական օրինակներով Սպանդարյանը նախազգուշացնում է, որ Բաքվում էլ նույն դեպքերը չկրկնվեն։ Այստեղ «եղած բոլոր տեխնիկական և կիրակնօրյա դասընթացները, թե ավանդվող գիտությունների սահմանափակությամբ, և թե նրանց սակավությամբ, բնավ չեն

[1] Ս. Սպանդարյան. Երկեր, հատ. I, էջ 173։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 204։
[4] Նույն տեղում, էջ 205։
[5] Նույն տեղում, էջ 206։

կարող գոհացնել բանվորներին»։ Իսկ բանվորների փորձերը իրենց ձեռքը վերցնելու նավթարդյունաբերողների համագումարի ժողովները և դրանք իսկական կուլտուրական օջախներ դարձնելու ասպարեզում՝ անհաջողության են մատնվել։ Ընդհակառակը, իշխող դասակարգերը գիտակցելով դրանց կարևորությունը, ժողովների և ժողհամալսարանների աշխատանքը կենտրոնացրել են իրենց ձեռքը և աշխատել են մթագնել բանվորների դասակարգային գիտակցությունը։ Իսկ ուրիշ դեպքերում հալածել են ու սահմանափակել նրանց գործունեությունը։

Բավական է հիշել, որ Բարվում կազմակերպվող ժողովրդական համալսարանի վարչության կազմում տեղ չեն գտել բանվորների պրոֆեսիոնալ միության ներկայացուցիչները և դա էլ բավական պատկերացում է տալիս,— ասում է Սպանդարյանը, «բանվորների մեջ գիտություն տարածող այդ օջախի բնույթի» մասին։ Թերևս դրանով էլ բացատրվում է այն փաստը, որ ժողհամալսարանները մատնվում են անգործության, չեն արդարացնում իրենց կոչումը։

Եվ այդ հանգամանքը առիթ է տվել Սպանդարյանին գրելու իր սուր հոդվածներից մեկը՝ «Իսկ դայլը տեղից չի շարժվում» վերնագրով։

Այս և նման փաստերից մարքսիստ հրապարակախոսը եզրակացնում է, որ Բարվի պայմաններում «մենք կարող էինք ուղղակի լոզունգ տալ ինքնակրթության ընկերությունն իմմնուրայն (ընդգծումն իմն է.— Ա. Ռ.) կերպով կազմակերպելու մասին»[1], որ բանվորները իրենց ինքնակրթության ու գաստիարակության գործը պետք է վերցնեն իրենց ձեռքը։ Ժողհամալսարանները, ըստ Սպանդարյանի, «պետք է դառնան ազատ դպրոցներ»։ Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ ժողովրդական տներն ու ժողհամալսարանները, բուրժուաների կողմից նշանակված դեկավարներով, չեն ապահովում բանվորների կարգս ցող-պահանջները գիտության ու լուսավորության ասպարեզում։ Ընդհակառակը, իրենց մի շարք ձեռնարկություններով ու կազմակերպած դասախոսություններով, «Մերը նորագույն գրականության մեջ» թեմային նվիրված դիսպուտներով, նրանք աշխատում են բանվորների միտքն ու գիտակցությունը հեռացնել կյանքի հուզող հարցերից։ «Մեր «հասարակական հիմնարկներում,— գրում է Սպանդարյանը,— շատ ավելի խոսվում է «Կապույտ թռչունների» և «Շանտիկլորների» մասին, «գեղեցկության և առապանքների կրոնի» մասին, քան թե մեր անմիջական ցավերի և կարիքների, քան թե մեր հասարակական աշխատանքի խնդիրների և նպատակների մասին»[2]։ Ժողովրդական տների ու համալսարանների դեկավարությունները հեռու են կանգնած բանվորների ու աշխատավորության լայն մասսաների պահանջներից ու կարիքներից, դեպի գիտությունն ու լուսավորությունը ունեցած նրանց բուռն ձգտումները բավարարելուց։ Մինչդեռ, ինչպես ճիշտ նկատում է հեղինակը, ժամանակները պահանջում են տանել «մանրակրկիտ և համառ աշխատանք տեղերում—մասսաների լուսավորման, նրանց մտավոր մակարդակի բարձրացման, նրանց տեսադաշտի լայնացման աշխատանք», որը «միակ խելացի և հանրօրեն անհրաժեշտ գործունեություն է հանդիսանում»[3]։

Որքան էլ իշխող դասակարգերը ձգտեն մթագնել բանվորների գիտակցությունը և խանդարեն նրանց ինքնակրթության ու ինքնագիտության զարթոնքի ճանը, այդ նրանց չի հաջողվի։ Սպանդարյանը լցված է պատմական լավատեսությամբ։ Նա այն հաստատ համոզմանն է, որ «բանվորների դեպի լույսն ու գիտությունը մեկ անգամ արդեն արթնացած ձգտումը այլևս չի դարող հեշտությամբ ճնշվել և նա ելք կգտնի իր համար»[4]։ Միայն թե անհրաժեշտ է, որ բանվորները իրենք իրենց ձեռքը վերցնեն կուլտուր-լուսավորական աշխատանքի ամբողջ գրվածքը և իրենք կազմակերպեն ու գաղափարապես դեկավարեն ինքնակրթության ու ինքնազարգացման գործը՝ բանվոր դասակարգին նվիրված գործիչների ու կազմակերպությունների օգնությամբ ու միջամտությամբ։

Ամփոփելով իր մտքերն ու դիտողությունները ժողովրդական համալսարանների և ժողովրդական տների գործունեության, նրանց դրության ու խնդիրների մասին, Սպանդարյանը կարևոր է համարում ընդգծել և բանվոր ընթերցողների գիտակցությանը հասցնել այն հանրահայտ ճշմարտությունը, որ «տիրող դասակարգերը միշտ էլ աշխատել են խավարի մեջ պահել բանվորական մասսաներին, քանի որ այդպես ավելի հեշտ է շահագործել և խաբել նրանց։ Մենք, գիտակից բանվորներս, պետք է նպատակ ունենանք գիտության լույսով լուսավորել մեր իսկ ընկերների մտքերը։

[1] Ս. Սպանդարյան. Երկեր, հատ. Ա, էջ 159։
[2] Նույն տեղում, էջ 301։
[3] Նույն տեղում.
[4] Նույն տեղում, էջ 201։

Տիրող դասակարգերը փորձում են իրենց ձեռքն առնել բանվորների լուսավորության գործը, որպեսզի հրամցնեն նրանց իրենց բուրժուական «ճշմարտությունները», որպեսզի բթացնեն նրանց դասակարգային բնազդները և մարեն նրանց սրտում պրոլետարական պայքարի մարտական ոգին։

Մենք, գիտակից բանվորներս, արհեստակցական միությունների հետ պետք է մեր ձեռքը վերցնենք բանվորական մասսաների լուսավորության գործը, տարածելով մեր պրոլետարական գիտակցության պայծառ լույսը»[1]։

Բոլոր դեպքերում, խոսքը վերաբերի տնտեսական քաղաքականությանը, թե կրթության ու լուսավորության հարցերին, բանվորների ինքնագործունեությանը, թե գիտության ու արվեստի բարդ հարցերին, բոլոր դեպքերում էլ Ս. Սպանդարյանը ելակետ է ընդունում բանվոր դասակարգի շահերը, ղեկավարվում դրանցով։ Նա կանգնած է գիտության ու կուլտուրայի, գրականության ու արվեստի պարտիականության լենինյան դիրքերում և այդ սկզբունքը հետևողականորեն կիրառում է իր գրական ու հրապարակախոսական գործունեության մեջ։

IV

Սպանդարյանի հայացքների հիմքում ընկած է կուլտուրայի պարտիականության լենինյան սկզբունքը։ Նա այն հաստատ համոզմանն է, որ շահագործողական հասարակության մեջ արվեստն ու գիտությունը, ինչպես և հասարակական այլ երևույթներ, ունեն իր դասակարգային բնույթ։ «Ապադասակարգայնության» ու «անպարտիականության» մասին խոսակցությունները հարցի դասակարգային բնույթը բողարկելու ձև են։ Ամենայն խորությամբ գիտակցելով այդ բանը, Սպանդարյանը հետևելով Լենինին, գրում է. «Բուրժուական հասարակության մեջ ամեն բան դառնում է ապրանք. ծախու և առնելու առարկա և այդ կանոնին ենթարկվում են ոչ միայն նյութական՝ ձեռքով շոշափելի իրերը, այլև մտավոր, ոչ նյութական բաները՝ գիտություն, տաղանդ, շնորհք և այլն»[2]։

Ստեղծագործական ազատության ու անկախության մասին խոսակցությունները գուրկ են հիմքից, լավագույն դեպքում ինքնախաբեություն են։ «Իգուր են մեր գիտնականները, գրողները, նկարիչները մեծ մեծ խոսում իրենց ազատության մասին,— գրում է Սպանդարյանը,— իգուր են իրենց բարձր դասում «շուկայից»։ Նրանք բուրժուազիայի ծառաներն են, իրենց գործունեությունը համակերպում են բուրժուազիայի պահանջներին ու ճաշակներին։

Կրթության գործը այժմյան բուրժուական հասարակության մեջ նույնպես չի խուսափում այդ դրությունից և կրում է պարզ դասակարգային դրոշմ»[3]։ Կարդալով այս տողերը, ընթերցողը մտքի ասոցիացիայով հիշում է Լենինի համանման մտքերը «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» հոդվածից։ «Հասարակության մեջ ապրել և հասարակությունից ազատ լինել չի կարելի»— ասել է Լենինը և ավելացրել՝ «փողի իշխանության վրա հիմնված հասարակության մեջ... չի կարող իրական և իսկական ազատություն լինել»։ «Բուրժուական գրողի, գեղարվեստագետի, գերասանուհու ազատությունը լոկ բողարկված կամ կեղծավորաբար դիմակավորվող կախումն է փողի քսակից, կաշառքից, ոռճիկից»։ Լենինի այս հայացքներն էլ ընկած են Սպանդարյանի դատողությունների հիմքում, լինելով նրա համար ղեկավար ուղեցույց։

Բուրժուազիայի իդեոլոգները և մամուլի ներկայացուցիչները շատ են սիրում խոսել պարտիական մոտեցման «վնասակարության» և անպարտիականության «բարիքների» մասին։ «Պարտիականության և անպարտիականության մասին», «Պնակալեզ ժուռնալիստներին» և այլ հոդվածներում Սպանդարյանը կոնկրետ փաստերի առիթով մերկացնում է բուրժուական ժուռնալիստների վաճառվածությունը և «անպարտիականության» կողմնակիցների պարտիական դեմքը, նրանց կախվածությունը փողի քսակից։ Այդ կարգի ժուռնալիստներից մեկին Սպանդարյանը անվանում է «Խաչատուրովի ճորտ», ակնարկելով նրա կախվածությունը Հարությա Խաչատուրովից։ Իսկ մի այլ դեպքում Սպանդարյանը դիմելով երկու բուրժուական ժուռնալիստների, որոնց նա անվանում է պնակալեզներ, գրում է. «Խաչատուրովի թերթի անոնիմները միայն մի

[1] Ս. Սպանդարյան, Երկեր. հատ. I, էջ 209։
[2] Նույն տեղում, էջ 118։
[3] Նույն տեղում։

ման գիտեն՝ սողալ այս աշխարհի հզորների առաջ, «հասարակության» ազդեցիկ անձնավորությունների փողի պարկի առաջ»[1]։

Այսպես է բուրժուական գրողների, ժուռնալիստների, հրապարակախոսների «ազատությունը» իրականում։ Նրանցից շատերը չեն խորշում զբաղվել խարեբայությամբ, միայն թե դուր գան իրենց տերերին՝ հրատարակիչներին ու մամուլի օրգանները ֆինանսավորողներին։ Կովկասի ոչ միայն ռուսատառ, այլև հայատառ շատ թերթերի փորձով Սպանդարյանը ապացուցում է լենինյան այն միտքը, որ բուրժուական մամուլն ու հրապարակախոսությունը, գրականությունն ու արվեստը կախված են փողի պարկից։

Հասարակական լուրջ նշանակություն ունեցող մերկացումների նկատմամբ, որ կատարել էր դեմոկրատական մամուլը, հայկական կապիտալով հրատարակվող թերթերը բոլորն էլ լռություն պահպանեցին։ Ինչո՞ւ, որովհետև «այդ կեղտոտ պատմությանը մեղսակից են նաև Սոլոլակի հենց այն բուրժուազիայի վերնաշերտերը, որոնց առջև հայ մամուլի բոլոր օրգանները, անկախ նրանց ուղղությունից ու գույնից, խոնարհվում են ինչպես «ազգային բարերարի» առաջ»։

Մի այլ առիթով Սպանդարյանը ցույց է տալիս, թե ինչպես Անդրկովկասի տարբեր ազգերի շահագործող դասակարգերի մամուլի օրգանները, մոռանալով իրենց ներքին գզվռտոցը՝ միացյալ ուժերով հակադրվում են դեմոկրատական մամուլի մերկացումներին։ «Կյանքի կոնտրաստները» հոդվածում նա հիշում է, թե ինչպես երեք ժուռնալիստներ՝ տարբեր ազգերից ու դասերից, միացած մի «տարուկ ընկերության մեջ», նպատակ են դրել «պաշտպանել Սոլոլակի բուրժուազիայի «բնաբիր հասարակությանը»։ Նրանք,— ասում է Սպանդարյանը,— մոռացել են բոլոր դասային, ազգային սահմանները ու միջնորմները, մոռացել են հայ-վրացական կոտորածի իրենց կոչերը, կազմել են եղբայրական միություն, տրիո, և «փորձում են անզոր կատաղությամբ ու նախանձով բացի տալ մեզ։ Այսպես ահա փողի պարկը միավորեց «վրացական» օրգան «Закавказская речь»-ը հայկական «Тифлисский листок»-ի և ազնվական «Закавказье»-ի հետ։

Սրատառուշ և խրատական միավորություն»[3]։

Փողի պարկը ամենազոր է և ամենակարող շահագործողական հասարակության մեջ, նա միավորում է անմիավորելին, նա հարկադրում է կեղծել ու խաբել, նա գնում է վաճառված ժուռնալիստներին ու ծախու գրչակներին, նա ստիպում է խարդախել վաստերը, կոծկել կեղտերը և հանցագործությունները, եթե դա անհրաժեշտ է։ Այսպես է բուրժուական մամուլի ու գրողների իրական դեմքը։ Հեռավոր Սիբիրում կարդալով «Кавказское слово» թերթի համարները, որ նրան ուղարկել էր Թիֆլիսի իր բարեկամը, Սպանդարյանը զավակներին գրած նամակում զգուշացնում էր այդ թերթի աշխատակիցների վարքագծի մասին, բոլոր այդ խատիսովների ու գոլուխանովների և գրպանային գործոց այլ վարպետների մեծախոսությունների նկատմամբ։ «Եթե դուք, զավակներս, երբեմն լսեք այն, ինչ որ նրանք գրում են կամ ասում, դուք նրանց բոլորովին մի հավատաք։ Նրանք խաբեբաներ են, որոնք վաճառում են իրենց խիղճն ու պատիվը, եթե միայն խիղճ ու պատիվ ունեն»[4]։

Ահա այսպիսի պատկեր ունի գործնականում բուրժուական գրողների, ժուռնալիստների ու հրապարակախոսների ստեղծագործական «ազատությունը»։ Սպանդարյանը կենդանի օրինակներով, կյանքից վերցրած փաստերով ապացուցել է մամուլի, բուրժուական գրողների ու ժուռնալիստների ուղղակի «կախվածությունը փողի քսակից»։

Այս բոլորից հետո բավական ծիծաղելի է, երբ նման ժուռնալիստներն ու հրապարակախոսները աշխատում են վեր դասել իրենց հասարակությունից, դասակարգերից ու պարտիաներից, գովել «անպարտիականության» բարեմասնությունները և «պարտիականության» վնասակարությունը։ Մինչդեռ այդ խոսակցությունների իմաստն ու նպատակն է թաղարկել մասսաներից բուրժուական գրականության ու մամուլի դասակարգային ու պարտիական էությունը և նրանց ներկայացուցիչներին հայտարարել «վերդասակարգային» կամ «համաժողովրդական» ու «համազգային» գործիչներ։ Նույնիսկ հասարակական այն գործիչներն ու գրողները, որոնք կազմակերպչորեն չեն պատկանում որևէ պարտիայի, բայց իրենց համոզմունքներով ու վարքագծով, իրենց գործունեությամբ հանդիսանում են արտահայտիչը այս կամ այն դասակարգի, հասարակական խմբավորության, դրանով էլ դառնում են պարտիական։ Այս մտքերն են ընկած

[1] Ս. Սպանդարյան, Երկեր հատ. II, էջ 174։
Նույն տեղում, էջ 176—177։
[3] Նույն տեղում, էջ 173։
[4] Նույն տեղում, էջ 317։

նրա այն հոդվածի հիմքում, որը նվիրված է «պարտիականության և անպարտիականության» հարցին։

«...Յուրաքանչյուր հասարակական գործիչ,— գրում է Սպանդարյանը,— պետք է ունենա գործունեության այս կամ այն ծրագիրը, այս կամ այն «հավատո հանգանակը», հասարակական գործերի և դրանց ուղղության տենդենցի այս կամ այն հասկացողություններ»[1]։ Իսկ եթե հասարակական գործիչը զուրկ է այդ հատկությունից, չունի «սոցիալ-քաղաքական դեմք», ապա դա, գերմանացիների արտահայտությամբ, «մի դատարկ ապիր է, որը կարելի է լցնել ինչով ուզես, դա մի հողմացույց է, որի վրա կարող են ազդել բոլորն ու ամեն ինչ, վերջապես դա ամենազգվելի օպորտունիստն է, որի ամբողջ քաղաքականությունը հանգում է մոմենտին հարմարվելուն և այն էլ՝ նվազագույն դիմադրության գծով»[2]։

Երբ բուրժուական ժուռնալիստները դավում են քաղաքային վարչության անդամության համար առաջադրված այս կամ այն թեկնածուին անպարտիական լինելու համար, Սպանդարյանը դատում է, որ այդպիսի «գովեստները» կարող են նսեմացնել այդ գործիչներին։ Եվ իրոք, եթե գործիչն ունի որևէ համոզմունք ու հայացք, ապա այդ համոզմունքներն ու հայացքները ոմանց մոտ կդառնան համակրանք, ուրիշների մոտ՝ կհանդիպեն հակակրանքի, դիմադրության։ Պայքարի պրոցեսում նրանք կհամախմբվեն և կդառնան տարբեր սոցիալական խավերի հակադիր շահերի արտահայտիչներ։

«Այդ բաժանումները,— գրում է Սպանդարյանը,— առանձնապես անխուսափելի, բնական ու տրամաբանական են, երբ կենդանի, մեծ գործում բախվում են բնակչության զանազան խավերի հակադիր շահերը»։ Այդպիսի կենդանի, մեծ գործ է հանդիսանում «քաղաքային ինտեռես-ները»։ «Ամենուրեք ամբողջ աշխարհում մունիցիպալ գործերի շուրջը տեղի է ունենում քաղաքական-սոցիալական շահերի բուռն պայքար, և այդ հողի վրա կազմվում ու կազմակերպվում են պարտիաներ՝ քաղաքային բնակչության զանազան տարբերի հակադիր միտումները պաշտպանելու համար»[3]։

Այսպես դատելով ու փաստարկելով, Սպանդարյանը հիմնավորապես հերքում է «անպարտիականության» առավելություններն ու բարեմասնությունները, և ապացուցում Լենինի մարի ճշմարտությունը այն մասին, որ «անպարտիականության գաղափարը բուրժուական է, իսկ պարտիականության գաղափարը սոցիալիստական»։ Իրոք, «չի կարելի ապրել հասարակության մեջ և ազատ լինել հասարակությունից». այն էլ այն հասարակությունից, որտեղ դասակարգային ուժերը բախումներն ու պարտիական պայքարն են կազմում հիմնական ներվը։

Շահագործողական հասարակության մեջ ամեն ինչ ենթարկվում է դասակարգային պայքարի օրենքին և դրանով է որոշվում ոչ միայն մամուլի օրգանների էությունը, այլև ընդհանրապես գիտության ու կուլտուրայի բնույթը։ Ազգային հարցը և ազգային կուլտուրան դուրս չեն այդ սահմանումներից և նույնպես ենթակա են այդ հիմնական օրենքին։

*

Իր հրապարակախոսության մեջ արծարծելով տնտեսագիտական ու սոցիոլոգիական բազմաթիվ կարևոր պրոբլեմներ, կուլտուրայի ու լուսավորության, գիտության ու արվեստի պարտիականության վերաբերող հարցեր, Սուրեն Սպանդարյանը հանդես է գալիս որպես լայն մտահորիզոնի տեր, բազմակողմանիորեն զարգացած գործիչ, ստեղծագործական մարքսիզմի ներկայացուցիչ։ Հենվելով մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների վրա, նա իրավացիորեն նկատում էր, որ «ժամանակակից հասարակության սահմաններում պրոլետարիատի շահերը, ձգտումները համապատասխանում են իրենց օբյեկտիվ նշանակությամբ հասարակական ընդհանուր մարդկության զարգացման առաջադիմության»[4]։ Սպանդարյանը պարտիական դիրքերից գնահատում է տնտեսական ու սոցիալական երևույթները և բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի հարցերը, կուլտուրայի ու արվեստի բարդ խնդիրը, բոլոր դեպքերում հավատարիմ մնալով լենինիզմի սկզբունքներին։

Իր գերագույն նպատակը համարելով բանվոր դասակարգի և ընդհանրապես աշխատավոր մասսաների ազատագրությունը, Սպանդարյանը նրանց քաղաքական ու դասակարգային դի-

---

[1] Ս. Սպանդարյան, Երկեր, հատ. II, էջ 166։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 167։

[4] Նույն տեղում, հատ. I, էջ 118։

տակցության զարգացման ու ռևոլյուցիոն դաստիարակության, կրթության ու լուսավորության գործը դիտում էր որպես իշխող կարգերի տապալման ու հաղթանակի կարևոր նախապայման. և դրա համար էլ կոչ էր անում. «Լույս, որքան կարելի է շատ լույս—ահա թե հրամայաբար ինչ է պահանջում կյանքը, ահա թե ինչ է բնազդաբար ձգտում բնակչության լայն խավերի արթնացող ինքնագիտակցությունը»[1]։

Սուրեն Սպանդարյանի տեսական հայացքների այս համառոտ շարադրությունը հնարավորություն կտա մեզ նախ ավելի խոր և ճիշտ ըմբռնելու ռուս և հայ գրականության ու հասարակական մտքի նկատմամբ նրա վերաբերմունքի, գնահատականների ու կարծիքների ամբողջ կարևորությունն ու նշանակությունը։ Եվ երկրորդ՝ իր ամբողջությամբ ներկայացնելու Սպանդարյանին որպես մարքսիստ տեսաբանի ու գրականագետի, որպես բոլշևիկյան հրապարակախոսության վարպետի։ Չէ՞ որ նրա գործունեության բոլոր կողմերը սերտորեն կապված են իրար հետ, լրացնում են և կազմում են մի միաձույլ ամբողջություն։

СУРЕН СПАНДАРЯН О ВОПРОСАХ ПРОСВЕЩЕНИЯ И КУЛЬТУРЫ

А. К. ВОСКЕРЧЯН

(Р е з ю м е)

В статье рассматриваются взгляды одного из выдающихся деятелей нашей партии и верного соратника великого Ленина — Сурена Спандаряна о проблемах народного просвещения и культуры.

С. Спандарян в своей статье «Школьный вопрос и социал-демократия» и в других выступлениях комментировал и обосновал программные установки Коммунистической партии в области народного образования и воспитания подрастающего поколения. Он разоблачает антинародную сущность политики господствующих классов в области народного просвещения и культуры.

В своих публицистических выступлениях Спандарян обращает особое внимание на работу Народных домов и Народных университетов. Он находит, что Народные дома надо превратить в Народные университеты и через них дать пролетарское воспитание трудовым массам, развивать их классовое самосознание, что рабочие организации должны сосредоточить в своих руках всю работу Народных домов, освобождая их от буржуазных влияний.

Говоря о классовом и партийном характере науки и культуры, Спандарян руководствуется ленинскими указаниями. Он раскрывает классовую и партийную сущность не только воспитательной работы, но и печати и литературы, науки и искусства. На конкретных примерах он показывает зависимость буржуазной печати и литературы от денежного мешка капиталистов.

Взгляды Сурена Спандаряна о школе и воспитании, о работе Народных домов и университетов, о партийности науки и культуры перекликаются с нашими днями. Изучение этих взглядов даст возможность расширить представление о политике нашей партии в области народного просвещения и культуры в дореволюционный период.

---

[1] Ս. Սպանդարյան, Երկեր, հատ. II, էջ 138։